# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1068-Ա « 21 » մարտի 2024 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ
15-Ի Հ.4440-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Սուրեն Ալոյանի դիմումը՝ Երևանի քաղաքապետի 2009 թվականի մայիսի 15-ի հ.4440-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

Ն.Չարբախի հ.313 հասցեում գտնվող հողամասի փաստացի մակերեսը կազմում է 4651.0քմ՝ Երևանի քաղաքապետի 2009 թվականի մայիսի 15-ի հ.4440-Ա որոշման մեջ ամրագրված 4800.0քմ մակերեսի փոխարեն:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, 52-րդ հոդվածի 2-րդ մասի 1.1-ին կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով, հիմք ընդունելով ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված գույքի առանձին որակական, քանակական բնութագրերի և դրա նկատմամբ առանձին իրավունքների /սահմանափակումների/ վերաբերյալ հ.հ. ԱՏ-08022023-01-1259, ԱՏ-15022024-01-0484, ԱՏ-15022024-01-0489 տեղեկանքները, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 24.05.2023թ. Ն/25480-23 և 29.02.2024թ. հ.Դ-21969-24 եզրակացությունները.

1. Երևանի քաղաքապետի 2009 թվականի մայիսի 15-ի «Գյուղատնտեսական նպատակով Ներքին Չարբախում հատկացված հ.հ.313, 313ա հողամասերի հողհատկացման հիմքերը վերականգնելու մասին» հ.4440-Ա որոշման նախաբանում և 1-ին կետում՝ «4800.0քմ» բառերը փոխարինել «4651.0քմ» բառերով:

2.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Ա.Փամբուխչյանը:

**ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**